

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒ ԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒ ԹՅՈՒՆ ՀԱՄԱՁԱՄԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՐՆԵՐԸ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտության և կառավարում» մասնագիտության ամբի տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

Ատենախոսությունը թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ
Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտում

Գիտական դեկան

պրոֆեսոր

տնտեսագիտության դոկտոր,

Գևորգյան Սուրեն Այվազի

Պաշտական ընդդիմախոսներ

պրոֆեսոր

տնտեսագիտության դոկտոր,

Չաքարյան Արարատդիշեի

տնտեսագիտության թեկնածու

Մարգարյան ԱննաՎլադիկի

Առաջատար կազմակերպչություն՝ Հայաստանի

ազգային ազրարային

համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է
2017թ. փետրվարի 23-ին ժամը 14⁰⁰-ին Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի
տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի
պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. հունվարի 23-ին

014 մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր՝

Ս.Ա.

Գևորգյան

ԱՏԵՆԱԽՈՒՄԻ ԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: ՀՀ-ում շրջակա միջավայրի ցածր որակը, բնական ռեսուրսների էքստենսիվ օգտագործումը խորացրել է Էկոլոգիական իրավիճակը, հատկապես մարզային մակարդակով: Պետք է նշել, որ մարզային մակարդակով տնտեսական գործունեության Էկոլոգիական անվտանգության ապահովման հիմնախնդիրները լիարժեք ուսուցումն ապահոված չեն, քանի որ եղած գիտական վերլուծական տվյալները վերաբերում են հիմնականում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը, իսկ Էկոլոգիական ռիսկերի և վտանգների գնահատման վերջնարդյունքը համախմբում է անորոշ:

Ժամանակակից բնապահպանական մարտահրավերները որոշակիորեն փոխեցին ազգային գործողություններին վերտորները, ստեղծելով նպաստավոր պայմաններ Էկոլոգիական անվտանգության ապահովման հիմնախնդիրներին լուծման համար: Այսպես, օրինակ, կարևորագույն քաղաքական քայլ է 2007 թվականին Ազգային անվտանգության ռազմավարության ընդունումը, որտեղ հստակ ամրագրված են հիմնադրույթները, կապված բնապահպանության և բնօգտագործման անվտանգության հետ: Հոսսադրող են նաև պետական նախաձեռնությունները, որոնք ուղղված են կենսաբազմազանության, ճառագայթային և քիմիական անվտանգության, պարեսային անվտանգության, տեղեկատվության անվտանգության ապահովմանը: Այնուհայտ է, որ դրան նպաստեց Հայաստանի մասնակցությունը բնապահպանական ռազմավարության և անվտանգ գարգացման գլոբալ և տարածաշրջանային գործընթացներին:

Լոռու մարզի պատմամշակութային և բնամշակութային ժառանգությունը մեծ արժեք է ներկայացնում և հարստացնում է Լոռու բնական կապիտալի ռեսուրսային, Էկոհամակարգային ֆունկցիաները/ժառանգությունները, կապված էսթետիկական, էթիկական, բարոյական, մշակութային և բնության պատմական ասպեկտների հետ: Ցավոք այդ ժառանգությունը կարծես դուրս է մնացել գիտական գնահատման շրջանակներից ու ըստարժանվույն ներգրավված չէ տնտեսական շրջանառության մեջ: Ծառայություններին միանալու մղումը լի է բացասական հետևանքներով, քանի որ ինչ-որ չափ անտեսում է Էկոժառանգությունների Էկոնոմիկան: Հետևաբար, ժամանակն է գիտակցել, որ «անվճար բնությունը» կարող է լի ավելի սրել Էկոլոգիականության և Էկոնանվտանգության հիմնախնդիրները մարզում: Հետևաբար, հրատապ է ՀՀ-ի առանձին մարզերի մակարդակով ուսուցումն ապահովել տնտեսական գարգացման հիմնախնդիրները և օրակարգային դարձնել Էկոլոգիական անվտանգության

ապահովման ազգային միասնական համակարգի ստեղծումը:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Ատենախոսության հիմնական նպատակն է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի տնտեսական համակարգի սեկտորիալ գործունեության Էկոլոգատնտեսական ամսական նահատկությունները՝ մարզի շրջակա միջավայրի և բնակչության Էկոլոգիական անվտանգության ապահովման ռազմավարական հիմնախնդիրների համատեքստում: Այդ նպատակին հասնելու համար առաջարկվել և լուծվել են հետևյալ հիմնական **խնդիրները**.

- ուսումնասիրել Լոռու մարզի Էկոլոգատնտեսական ամսական նահատկությունները, տնտեսության արդի վիճակի և զարգացման ուղղվածության վերլուծության համատեքստում,
- վերլուծել տնտեսական գործունեության Էկոլոգիական գնահատման և Էկոլոգիական անվտանգության ապահովման գիտական ուղղվածությանը,
- ներկայացնել Լոռու մարզում շրջակա բնական միջավայրի Էկոլոգիական որակի վրա ընդերքօգտագործման ազդեցության և Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրները,
- դիտարկել մարզի կենսաբազմազանության և անտառների վրա ազդեցության վտանգների, թափոնազոյացման և սրճամբարների Էկոլոգիական անվտանգության ապահովման հիմնախնդիրները,
- գնահատել Լոռու մարզի տնտեսական զարգացման հեռանկարները, բնապահպանական ծրագրային գործողությունները և Էկոլոգիական անվտանգության ապահովման հիմնախնդիրների համակարգման միջոցով,
- առաջարկել Էկոլոգատնտեսական համակարգերում միսկի և վտանգների կառավարման կազմակերպական ու տնտեսական մեխանիզմներ, ինչպես նաև մշակել Էկոլոգիական անվտանգության ապահովման մարզային համակարգը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության

օբյեկտը ՀՀ-ի Լոռու մարզի տնտեսական համակարգի սեկտորիալ գործունեության զարգացման և Էկոլոգիական անվտանգության ապահովման միասնական համակարգն է, իսկ առարկան՝ ՀՀ-ի Լոռու մարզում շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման ոլորտներում վտանգավոր միտումների ձևավորման հիմնախնդիրների վերհանումը, համակարգում ու Էկոլոգիական անվտանգության կազմակերպման և ապահովման մարզային համակարգի մշակումը:

Ատենախոսության տեսակն, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտությունները տնտեսական հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության

տն տես սակ ան զարգացման, բնապահ պանոլ թյան և բնօգտագործման ոլորտներին քաղաքակն ու թյոլ ու նը, ազգային անվտանգ ու թյան ռազմավար ու թյոլ ու նը, օրենսդր ու թյոլ ու նը, մեթոդակ ան և իրավակ ան փաստաթղթերը, ինչպես նաև Էկոլոգիակ ան անվտանգ ու թյան ապահովման միջազգային առաջատար փորձը, բնապահ պանակ ան կոնվենցիոնալերը, հայրենակ ան և արտասահմանյան տն տես սագետներին և բնապահ պան ներին նորագոլ ն ու սոլ մնասիր ու թյոլ ու ները, գիտամեթոդակ ան և ռազմավարակ ան մշակ ու մները:

Ու սոլ մնասիր ու թյոլ ու ներին ընթացք ու մ կիրառվել են համակարգային համեմատակ ան վերլ ու ծ ու թյոլ ու ներին, խմբավոր ու մներին և գրաֆիկակ ան պատկերացման մեթոդները, Էկոլոգատն տես սակ ան գնահատման և տեղեկատվ ու թյան հավաքագրման ու մշակման այլ մեթոդները:

Աշխատանքի համար տեղեկատվակ ան հիմք են հանդիսացել 33 Էկոլոգիկային նախարար ու թյան (ներկային 33 տն տես սակ ան զարգացման և ներդր ու մներին նախարար ու թյոլ ու ն), 33 բնապահ պան ու թյան նախարար ու թյան, 33 արտակարգ իրավիճակ ներին նախարար ու թյան, 33 առողջապահ ու թյան նախարար ու թյան և գերատեսչակ ան ծառայ ու թյոլ ու ներին ու Ազգային վիճակագրակ ան ծառայ ու թյան տեղեկագրերը, Էկոլոգիակ ան գեկ ու յ ցները և տարեկակ հաշվետվ ու թյոլ ու ները, միջազգային համաձայնագրերը, Էկոլոգիակ ան անվտանգ ու թյան ապահովման պարբերակ ան ներին գիտակ ան ու սոլ մնասիր ու թյոլ ու ներին արդյ ու նքները և ժամանակակից այլ գիտամեթոդակ ան նյ ու թերը:

Ատն նախ ու թյան գիտակ ան նոր ու յ թը: Ատն նախ ու թյան հիմնակ ան գիտակ ան նոր ու յ թը 3 այաստանի 3 անրապետ ու թյան Լոռ ու մարզ ու մ տն տես սակ ան գործ ու ներ ու թյամբ պայմանավորված վտանգավոր Էկոլոգիակ ան միտ ու մներին և դրանց համակարգման միջոց ու վ մարգի Էկոլոգիակ ան անվտանգ ու թյան ապահովման ռազմավարակ ան նշանակ ու թյան հիմնախնդիր ներին վերհան ու մն է, որին շրջանակ ներ ու մ:

1. մշակվել է 33-ի Էկոլոգիակ ան ոլորտ ու մ անվտանգ ու թյան ապահովման և հիերարխիկ դասակարգման մեթոդակ ան նոր մոտեսց ու մ, որը հնարավոր ու թյոլ ու ն է տալ իս անվտանգ ու թյան միասնակ ան համակարգ ու մ առանձնացնել ազգային և մարգային անվտանգ ու թյոլ ու նը, օբյեկտիլ ու կակ և անձի անհատակ ան անվտանգ ու թյոլ ու նը,
2. համալիր իրավիճակային վերլ ու ծ ու թյան արդյ ու նք ու մ բացահայտվել և գնահատվել են Լոռ ու մարզ ու մ տն տես սակ ան գործ ու ներ ու թյան Էկոլոգիակ ան կարգավորման և անվտանգ ու թյան ապահովման ռազմավարակ ան հիմնախնդիր ները, և այդ հիմքեր ու վ դրա հիման առաջարկվել են ազգային և տարածաշրջանային Էկոնակ անվտանգ ու թյան ապահովման գերակա միջոցառ ու մները,

3. Եկոլ ոգատն տեսական համակարգերում մ ռիսկի և անվտանգության կառավարման կազմակերպական ու տնտեսական մեխանիզմների համակարգման հիման վրա մշակվել է Լոռու մարզի Եկոլ ոգիական անվտանգության ապահովման նոր համակարգ, որի ներքին կառուցվածքը և գործառույթները կողմնորոշված են ինչպես մարզային, այնպես էլ տարածաշրջանային ռիսկերի ու Եկոլ տանգների կանխարգելմանը:

Ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը: Ատենախոսության շրջանակներում մ իրականացված գիտական ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքները, մեթոդական մշակումները և առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ-ի Լոռու մարզի շրջակա միջավայրի և բնակչության Եկոլ ոգիական անվտանգության ապահովման միասնական համակարգի ձևավորման օրենսդրական և իրավական կարգավորման, ինստիտուցիոնալ կառույցների ամրապնդման ազգային միասնական համակարգում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները, մեթոդական մշակումները և առաջարկությունները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում:

Հեղինակի կողմից ատենախոսության թեմայով հրատարակվել են 5 գիտական հոդվածներ:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է առաջարկից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության տեքստը շարադրված է 128 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱՒՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ցույց է տրված դրա մշակվածության աստիճանը, սահմանված են հետազոտության նպատակները և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպված է գիտական նորույթը, ներկայացված են աշխատանքի գիտագործնական ու կիրառական նշանակությունը, հետազոտության փորձարկումը և հրատարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Լոռու մարզի զարգացման

Էկոլոգաունտեսսական առանձնահատկությունները» գլխում

վերլուծվել են Լոռու մարզի տնտեսական զարգացման արդի վիճակը, Էկոլոգաունտեսսական առանձնահատկությունները, Էկոլոգիական գնահատման առաջատար մեթոդաբանությունը և կիրառման արդյունավետությունը, ինչպես նաև տնտեսական գործունեության Էկոանվտանգության ապահովման հիերարխիկ համակարգը:


Լոռու մարզի տնտեսության առաջատար ոլորտը շարունակում է մնալ արդյունաբերությունը, որը չնայած համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությանը, իր ցուցանիշներով եղել է ամենակայունը և զարգացման միտումներ ցուցաբերողը (արյունակ 1):

Արդյունաբերության համակարգի վերջին տարիների կառուցվածքային փոփոխությունների արդյունքում, ներկայումս առաջատար են քիմիական և մետալուրգիական ճյուղերը, իսկ մեքենաշինությունը սարքաշինությունը, որոնք նախկինում արտադրության ընդհանուր ծավալում առաջատար դիրքեր էին զբաղեցնում, իրենց տեղը զիջել են թեթև արդյունաբերությանը:

**2015թ. Լոռու մարզի տնտեսության հիմնական
ուղորտների արտադրության ծավալը**

Լոռու մարզի տնտեսության հիմնական ուղորտներ	Արտադրության ծավալը (մլն դրամ)
Արդյունաբերություն	120307.2
Գյուղատնտեսություն	73300
Առևտուր	50090.8
Ծառայություններ	17720.4

Չգալիորեն բարձրացել է սննդի արդյունաբերության տեսակարար կշիռը, սակայն արտադրանքի արտահանման ծավալների տեսակարար կշիռը հանրապետական ցուցանիշի նկատմամբ նվազել է: Մարզի արդյունաբերական համալիրում ըստ արտադրության ծավալի արդյունաբերական ներուժը կենտրոնացված է թումանյանի տարածաշրջանում: Մարզի փոքր և միջին արտադրությունների մոտ 40%-ը գյուղմթերքներ վերամշակող ու սննդի արտադրության ձեռնարկություններ են: Չգալի թիվ են կազմում նաև քարի վերամշակման արտադրամասերը, փայտամշակման, էներգետիկայի և այլ ձեռնարկություններ:



Գծապատկեր 1. Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալների դինամիկան ընթացիկ գներով (մլն. դրամ)¹

Ինչպես ցույց են տալիս գծապատկեր 1-ի տվյալները 2015 թ.-ին մարզում թողարկվել են 120,307.2 մլն դրամի

¹ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2015 թ. աշխատանքային գործունեության հաշվետվություն, էջ 21-24

արդյունաբերական արտադրանք՝ 2014 թվականի 69,826.5 մլն դրամի դիմաց: Աճի տեմպը կազմել է 202.2%: 2015 թվականին մարզի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում կազմել է 9.1%:


Լոռու մարզում գործում են թվով 24 փոքր ՅԷԿ-եր, սակայն վերջին տարիներին մարզում բնեղեն արտահայտու թյամբ էլ եկտրաէներգիայի արտադրության ծավալի աճ տեղի չի ունեցել: Իսկ դրամական արտահայտու թյամբ պետության կողմից վարվող խթանող սակագնային քաղաքականության արդյունքում գրանցվել է մոտ 40% աճ: Այնուամենայնիվ ՅԷԿ-երի քանակական աճը ոչ բոլոր դեպքերում է եկուղոգիապես արդարացված:

Էկուղոգիապես չկարգավորված անթրոպոգեն գործունը մեծ վնաս է հասցնում շրջակա միջավայրին և մարդկանց: Որքան էական են տնտեսական գործունեության և Էկուղոգիական հետևանքները, այնքան արդիականանում է դրանց կանխման հիմնախնդիրը, ինչպես նաև Էկուղոգիական անվտանգության ապահովման արդյունավետ մեխանիզմների գիտական որոնումը: Էկուղոգիական գնահատումը, հանդիսանում է ներկայիս Էկուղոգիական քաղաքականության և որոշումների ընդունման ամենատարածված և ազդեցիկ գործիքներից մեկը: Հիմնված է այն պարզ ճշմարտության վրա, որ ավելի հեշտ է գտնել և կանխարգելել Էկուղոգիական բացասական հետևանքները գործունեության պլանավորման փուլում, քան հայտնաբերել և ուղղել իրականացման փուլում: Էկուղոգիական գնահատման միջազգային և ազգային համակարգերում կիրառվող մեթոդաբանությունը բավականին հարուստ է մեթոդական մոտեցումներով ու տեղայնացման տեսանկյունից մատչելի է: Մեթոդական բարեփոխումների առումով իրավիճակը ՀՀ-ում դեռևս բարդ է, քանի որ ներկայումս փորձագիտական արակտիկայում կիրառվում են սահմանափակ թվով ավանդական մեթոդները: Մեթոդական դաշտից ինչ-որ չափ դուրս են մղվել վնասների, ռիսկի և վտանգների պարտադիր գնահատման ցուցանիշները և չափորոշիչները: Անկաստար է ՌԵԳ-ի մեթոդաբանությունը:

Տվյալների վերլուծությունը ցույց տվեց, որ տնտեսական գործունեության նախագծերի աճը առավել ազույնի է հասնում 2015թ-ին (168 նախագիծ), այսինքն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ նոր օրենքի գործածության պայմաններում, իսկ գործունեության տեսակներից եկամտաբերությունը պահպանվում է հիմնականում ընդերքօգտագործման ոլորտում (տես՝ գծապատկեր 2-ը):

Վերջին տարիներին, հատկապես կայուն զարգացման հայեցակարգի շրջանակներում, ավելի հաճախ են անդրադարձնում Էկուղոգիական անվտանգության գործնական

Նշանակու թյան արդիականացմանը :



Գծապատկեր 2. 2008-2015թթ. ընդերքօգտագործման նախագծերի Էկոլոգիական փորձաքննու թյան դինամիկան²

Տնտեսական զարգացման արդի պայմաններում պատահական չէ, որ Էկոլոգիական անվտանգության ապահովումը գտնվում է ընդհանուր անվտանգության ապահովման համակարգի առաջատար դիրքում և անմիջականորեն կապված է տնտեսական անվտանգության հետ: Հաճախ բնութային հավասարակշռության խախտումը ոչ խելամիտ և Էկոլոգիայի սխալ կարգավորված տնտեսական գործունեության արդյունք է: Տրամաբանորեն արդարացված և գերադասելի է նաև Էկոլոգիական ոլորտում անվտանգության դասակարգումը սկսել մարդու անվտանգության դասակարգման միասնական համակարգի գիտակցումից՝ անցնելով հասարակության անվտանգության ավելի բարդ մակարդակների և գնահատելով դրանց կարևորությունը և ազգային անվտանգության համակարգում: Նման մոտեցմամբ Էկոլոգիական ոլորտում առաջարկվել է գործնականում կիրարկել անվտանգության հետևյալ բանաձևը՝

$$\begin{aligned}
 & \text{Անվտանգությունը} = \text{Նոր պես համակարգային ցուցանիշ} = \\
 & \text{Մարդու անվտանգություն} + \text{Հասարակության} \\
 & \text{անվտանգություն} + \text{Պետության անվտանգություն} \\
 & \text{անցում մազգային անվտանգության համակարգի}
 \end{aligned}
 \tag{1}$$

Տվյալ համատեքստում նշանակալից և հուսադրողայն է, որ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության (2007թ) հիմնարկում ըստ արժանվոյն արտացոլված են պետության և հասարակական և ազգային անվտանգության ապահովման, բնական և տեխնածին

²«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2015թ.ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն

բնույթի արտակարգ իրավիճակների խնդիրները³:

Ատենախոսության երկրորդ՝ «Տեսության հործունեության հիմնախնդիրները **Էկոլոգիական անվտանգության** **Լոռու մարզում»** վերնագրով գլխում վերլուծվել են քննարկված օգտագործման ազդեցությունը շրջակա բնական միջավայրի Էկոլոգիական որակի վրա, ներկայացվել են Կենսաբազմազանության և անտառների վրա ազդեցության վտանգները և դրանց վերլուծության մոտեցումները, գնահատվել են թափոնագոյացման և պղծամբարների Էկոլոգիական անվտանգության ապահովման ուղղությունները

ՀՀ-ի տնտեսական հզորությունը կանխորոշվում է բնառեսուրսային ներուժից, մասնավորապես հանքահումքային ռեսուրսների առկայությունից: Հայաստանում հայտնաբերված է մոտ 592 հանքավայր, որոնցից արդյունահանվում է ավելի քան 60 տեսակի օգտակար հանածո: Այստեղ իր մասնաբաժինն ունի Լոռու մարզը, որի համար հանքարդյունաբերությունը հանդիսանում է տնտեսական զարգացման առաջատար ճյուղերից մեկը: Հանքերը Լոռուի շահագործվում են հիմնականում բաց եղանակով, ինչը քիչ ծախսատար և տեխնիկատար է, սակայն Էկոլոգիական հետևանքների մասով՝ խիստ անհասցուցանող: Ներկայումս, երբ շարքից դուրս են եկել անօրգանական փոշու և վտանգավոր զազերի որսման և չեզոքացման սարքավորումները հրամայական է դառնում սահմանային թույլատրելի մակարդակները չգերազանցող արտանետումների բնապահպանական հսկողությունը: Թեղուտի հանքավայրի շահագործումը կտնի ավելի քան 30 տարի, ինչը որոշակիորեն կնպաստի տարածաշրջանում բնապահպանական լուրջ խնդիրների առաջացմանը: Էկոլոգիական հետևանքների լիարժեք հսկողություն անապահովման տեսանկյունից, անհասցուցանող է, հատկապես գնահատման «մեթոդական անորոշությունը», կապված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մեթոդական բացթողումների հետ: Թեղուտի հանքավայրի շահագործման ներկայիս միտումները միանգամայն վկայում են այն մասին, որ նախագիծը ի սկզբանե պետք է ենթարկվեր Ռազմավարական Էկոլոգիական գնահատմանը, այլ ոչ թե դիտվեր «պարզ» օբյեկտների բնապահպանական փորձաքննության տեսանկյունից:

Հանքարդյունաբերական համալիրի գործունեության, վնասակար նյութերի արտանետման պայմաններում մեծ վնաս է հասցվում մթնոլորտային օդին: Այսպես, անշարժ աղբյուրներից արտանետված վնասակար նյութերի քանակը 2015թ.-ին կազմել է 225.9 հազ տ, որի 42.9%-ը որսվել և մաքրվել

³ «Ռիո +10» Ազգային գնահատման զեկուլոյց Երևան, - 2002թ 95 էջ
11

Է, մինչդեռ 2010թ.-ին կազմել է 97.5 հազ տ, որից որսվել է 37.6 %-ը⁴: Անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումների առավել մեծ տեսակարար կշիռը 2007-2015 թվականների կտրվածքով պատկանում է Լոռու մարզին, այնուհետև Կոտայքի և Տավուշի մարզերին (2009-2012 թթ.) և Երևան քաղաքին (2010-2012թթ.): Լոռու մարզի համար բեկումնային եղավ 2008 թվականը, երբ մթնոլորտային արտանետումների անկման դրական միտումը տեղիք տվեց դրանց աճին: Հանքերի շահագործման ժամանակ առաջացած վտանգավոր նյութերի բացասական ազդեցությունները կրելու հարցում անմասն չեն մնում նաև ջրային ռեսուրսները, հատկապես՝ գետերը: Հանքավայրերի շահագործման արդյունքում գետերի ջրերում բարձրացել են ծանր մետաղների, սուլֆատների և բազմաթիվ վտանգավոր քիմիական միացությունների միջին կոնցենտրացիաները, ինչի առկայությունն այսօրվաներում տեղի բնակչունը գետի ջուրն օգտագործում է ոռոգման նպատակներով:

Լոռու մարզի հողատարածքների զգալի մասը անմշակ մնալու հետևանքով առաջ է եկել հողատարածքների աստիճանաբար դեգրադացիայի ենթարկման վտանգ: Հողատեսքերի ակտիվ որակագրկումը լուրջ խոչընդոտ հանդիսացավ բուսաբուծության և անասնապահության համար: Տվյալ հանգամանքները նպաստում են գյուղատնտեսական նշանակություն հողատեսքերում մոլախտերի և կիսասնապատային բույսերի բուռն զարգացմանը, որը տանում է դեպի հողերի աստիճանական անապատացման: Հողի բերրի շերտի արտադրության և պահպանության գործում կարևոր դեր են խաղում մարզի անտառածածկ տարածքները, որոնք վերջին 20 տարիների ընթացքում ենթարկվել են անտրոպոգեն և բնական (հիմնականում քամատապալ) խաթարման: Անտառների ինտենսիվ հատումների հետևանքով խիստ ակտիվացել են սելավասողանքային և էռոզիոն երևույթները: Մտահոգիչ է տարածաշրջանի հողերի աղտոտումը ծանր մետաղներով՝ սնդիկը (Hg), կադմիումը (Cd), արսենը (As)⁵: Պետք է նշել, որ առավել մտահոգիչ է բաց եղանակով հանքերի շահագործումը, որի դեպքում ներկայումս շինանյութերի արդյունահանման հետևանքով շրջանառությունից հանվել է ավելի քան 7 հազ. հազ ուղատնտեսական նշանակություն հողեր:

Լոռու մարզի կենսաբազմազանությանը վտանգող գործընթացներն են բնական միջավայրի փոփոխությունը և երբեմն կորուստը, կենսառեսուրսների գերօգտագործումը, աղտոտումը, կլիմայի փոփոխությունը, սոցիալական


⁴ՀՀԱՎԾ «Բնական պաշարներ և շրջակամիջավայր: Մթնոլորտային օդ» 2011-2015թթ.
⁵ՀՀ գյուղմթերքի ծանր մետաղներով աղտոտման ռիսկի գնահատում: - Եր.: 2011, էջ 8-20

բևեռացումը, բնակչության աղքատացումը, եկամտի այլընտրանքային կայուն աղբյուրի բացակայությունը և այլն: Արդյունքում տեղի են ունենում բույսերի տեսակային կազմի աղքատացում/արտուլյացիաների նվազեցում, Էկոհամակարգերի կազմալուծում, երբեմն նույնիսկ որոշ համակեցությունների ու բուսատեսակների կորուստ: Ոչ այնպիսի, տարերային, զանգվածային անտառահատումների հետևանքով խախտվել է անտառի վերարտադրման բնական ընթացքը: Ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ մարզում դեմոգրաֆիկ տեղաշարժումները ունեն նաև «Էկոլոգիական երանգ», ինչը գիտական գրականությունում հայտնի է որպես «Էկոլոգիական փախտականների» ֆենոմեն: Դժվար է համակերպվել այդ հանգամանքի հետևի մոռանալ, որ ըստ պատանական տվյալների Լոռու մարզը մթնոլորտային օդի աղտոտման ցուցանիշներով առաջատարն է Հայաստանում:

Անտառահատումները, մթնոլորտային օդի հսկայական աղտոտվածությունը, հողային և ջրային ռեսուրսների աղտոտվածության գերազանցումը սահմանված ՍԹԿ-ից ի վերջո իրենց անդառնալի ներգործությունն են ունենում Էկոհամակարգի վրա:


ՀՀ Լոռու մարզի անտառային պետական ֆոնդը կազմում է 101,205.0հա, որից անտառածածկ է 85,799.6հա: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը: Անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, գիտական բարձր արժեք և աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ: Հանքարդյունաբերության ոլորտում առաջացած Էկոլոգիական խնդիրների շարքին են դասվում նաև անտառային մակերեսների արհեստական կրճատումները՝ հանքերի շահագործման նպատակով:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ եթե տվյալ տարածաշրջանում անտառները 25%-ից պակաս են, ապա կորցնում են իրենց կլիմայակարգավորիչ, հակաէրոզիոն, ջրակարգավորիչ նշանակությունը և արդյունաբերական նպատակներով օգտագործվել չեն կարող: Ասորինի և անկանոն անտառահատումների պատճառով անտառների բնական վերածի պայմանները խթանվել են և արանց լրացուցիչ անտառվերականգնման աշխատանքների հնարավոր է մարզի անտառային Էկոհամակարգերը բերել նախկին վիճակին: Գծապատկեր 3-ում ներկայացվել են 2007-2015 թթ. հայտնաբերված ընդհանուր ասորինի հատումների ծավալները:



Գծապատկեր 3. 2007-2015թթ. ապրիլի նի ծառայատու մները *Լոռու մարզում (խոսք ված խոր.մ)*⁶

Լոռու մարզում հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ծավալները 2013-2015 թթ. կտրուկ աճ են գրանցել՝ 2015 թ.-ին հասնելով 55013.2մլն դրամի (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. ՀՀ Լոռու մարզի հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման արտադրանքների ծավալների փոփոխությունը դինամիկան 2011-2015 թթ. (մլն դրամ)⁷

2013-2015թթ. հանքարդյունաբերական ծավալների աճը, կապված է հանքերի էքստենսիվ շահագործման հետևյալ կողմից և բնատարողության ցուցանիշի աճի մասին: Եթե այդ երևույթն ընդունելի է մարզի տնտեսական աճի ապահովման տեսանկյունից, ապա Էկոլոգիական հետևանքները/վտանգները կարող են էապես ազդել Էկոհամակարգերի բնական կայունության վրա:

ՀՀ-ում շրջակա միջավայրին մեծ վնաս է հասցնում արդյունաբերական թափոնների առկայությունը: Ստեղծված իրավիճակը մասնակիորեն կարելի է կապել վնասագործվող ժամանակակից տեխնոլոգիաների բացակայության,

⁶ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2015թ. աշխատանքային գործունեության հաշվետվության...- Էջ 43

⁷ ՀՀ ԱԿԾ «Արդյունաբերության և Լոռու մարզ» 2011-2015թթ.

Ֆինանսական միջոցների սղուծյան և կարգավորող տնտեսական մեխանիզմների անարդյունավետության հետ: Յայտնի է, օրինակ, որ մինչև տնտեսական ճգնաժամը ՀԱՀ-ն կայուն և աճ է գրանցել: 2008-2009թթ. ճգնաժամի հետևանքով այս ցուցանիշը որոշակի անկում է ապրել, իսկ հետագայում աճի տեմպերը վերականգնվել են, և երկիրը շարունակում է զարգանալ արագընթաց տնտեսական աճի մոդելի հիման վրա, որն բնատուր և բնաբայ քայող է: Ամենինիս պատահական է, որ նույն ժամանակահատվածում (2008-2010թթ.) կտրուկ ավելացել է նաև թափոնագոյացման ցուցանիշը: Սակայն, ի տարբերություն ՀԱՀ-ի ցուցանիշների, այն ունեցել է անկանոն բնույթ, նույնիսկ արագընթաց տնտեսական աճի պայմաններում: Դանշանակում է, որ հակարկած են տնտեսական և էկոլոգիական օգուտները⁸: Մասնավորապես, թափոնների վնասագերծման և ոչնչացման դինամիկայի միտումները 2007-2011թթ. զգալիորեն տարբերվում են 2012-2015թթ. գրանցված արդյունքներից: 2008 թվականից թափոնների վնասագերծման և ոչնչացման ցուցանիշների նվազում են բացառությամբ 2013-2014 թթ., որտեղ գրանցվում է կրկնակի աճ: Այնուամենայնիվ, նույնիսկ նման կտրուկ աճի պարագայում դժվար է փաստել դրական արդյունքի մասին, քանի որ երկրի երկրորդային ռեսուրսների օգտագործման ոլորտում ձևավորվում է «չբաղված» օգուտների կայուն միտում: Այստեղ կարևոր է լեռնահանքային ոլորտի տեխնոլոգիական վերադինումը՝ հիմնվելով ինչպես հայ գիտնականների մշակումների, այնպես էլ առաջատար միջազգային փորձի տեղայնացման վրա: Այդ գործընթացը պետք է ընդգրկվի ՀՀ ընդերքօգտագործման ռազմավարության գերակայություններում: Յակառակ դեպքում կարելի է ապահովել երկրորդային հումքի զգալի կորուստներ՝ հարստացնելով էկոլոգիապես վտանգավոր պաշտպանները և խախտելով շրջակա միջավայրի բնական կայունությունը⁹:

Ատեսխոսության երրորդ «Լոռու մարզի տնտեսական զարգացման հեռանկարները և բնապահպանական ծրագրային գործողությունները» գլխում առաջարկվել են էկոլոգիական անվտանգության բարձրացման ուղիները Լոռու մարզում, հիմնավորվել են մարզի սոցիալ-տնտեսական զարգացման և բնապահպանական ծրագրերի բարեփոխման գերակայությունները, ինչպես նաև մշակվել են Լոռու մարզի տնտեսական զարգացման հեռանկարները և բնապահպանական ծրագրերը:

⁸ ՀՀ ԱԿԾ «Բնական պաշարներ և շրջակա միջավայր» 2008-2014 թթ.

⁹ ԵՊՀ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ «ՀՀ մետաղական օգտակար հանածոների պաշտպանների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության վտանգների նվազեցմանն ուղղված պահպանների և խնդիրների վերհանումը» - 2014

ՀՀ-ում քիմիական և հանքային արդյունաբերությանը շարունակում են զարգանալ հիմնականում տնտեսական շահերի իրացման շրջանակներում, նվազեցնելով Էկոլոգիական անվտանգության ապահովման խնդիրները և ռիսկերը: Այս ամենը առավելագույնս վերաբերում է Լոռու մարզում մթնոլորտային օդի, ջրային, հողային, անտառային ռեսուրսների կենսաապահովող Էկոլոգիական որակի պահպանմանը և վտանգավոր թափոնների վերամշակմանը, կանխելով Էկոհամակարգերի կայունության խախտումն ու դեգրադացումը: Համառոտ վերլուծությանը հիման վրա առանձնացվել են հետևյալ հիմնախնդիրները:

1. Մթնոլորտային օդի, ջրերի և հողերի վրա ազդեցության ու շրջակա միջավայրի որակի անկման Էկոլոգիական վտանգները: Լոռու մարզում բնապահպանական և Էկոլոգիական անվտանգության ապահովման հիմնախնդիրներից է հանդիսանում շրջակա միջավայրի ծանր մետաղներով (պղինձը (Cu), ցինկը (Zn), կապարը (Pb), այլ նաև ուրիշ թունավոր մետաղներ՝ սնդիկը (Hg), կադմիումը (Cd), արսենը (As) և այլն) աղտոտվածությանը, որը առայսօր չի ստացել արժանի վերլուծում: Անհանգստացնող է մթնոլորտային օդի աղտոտվածության աճի կայուն միտումը, ինչպես նաև ջրերի ու հողային ռեսուրսների որակի անդառնալի կորստի ռիսկերը և հասարակական առողջության որակի անկման ու անթրոպոգեն Էկոլոգիական հիվանդությանը և ներքին առաջացման վտանգները: Մի շարք պատճառներով Լոռու մարզում լեռնահանքային կոմբինատների աշխատանքն իրականացվում է առանց տեխնոլոգիական ժամանակակից մաքրող սարքավորումների, ինչը հանգեցնում է հոսքաջրերի մուտքին դեպի մակերևութային ջրահոսքեր, այդամբարների բարձիթողությանը, որոնք էլ շարունակում են բարդացնել առանց այն էլ անմխիթար Էկոլոգիական իրավիճակը Լոռու մարզում:

2. Մարզի գյուղատնտեսական նշանակության մշակովի հողատարածքների դեգրադացիա, բերրիության/բերքատվության անկում և անապատացում: Առաջացնում են լուրջ խնդրներ տերբուսաբուծության և անասնապահության համար, որոնք նպաստում են գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում մոլախոտերի և կիսաանապատային բույսերի բուռն զարգացմանը, որը տանում է դեպի հողերի աստիճանաբար որակազրկման ու անապատացման:

3. Անտառածածկ տարածքների կրճատում, անտառների ինտենսիվ և ապօրինի հատումների Էկոլոգիական վտանգների կանխում: Ակտիվացել են սելավասողանքային և էրոզիոն երևույթները, որոնք բացասաբար են անդառնալից և մարզի եզակի լեռնային անտառների հողապաշտպան, ջրապաշտպան և

կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև բուսական
ու կենդանական տեսակների բազմազանություն վրա: Մեծանում
է անտառների Էկոհամակարգային/Էկոլոգիական
ծառայությունների \$ու նկցիայի արժեզրկման ռիսկի
հավանակությունը:

4. Թափոնների տեսակավորման, վերամշակման,
վնասազերծման և օգտագործման ժամանակակից
բնապահպանական պոլիգոնի բացակայություն: Ռեսուրսային
ներուժի մաքսիմալ օգտագործումը հնարավորություն կտա
նվազեցնել բնությունից հումքի կորզման
(արդյունահանման) տեմպերը, հետևաբար՝ կրճատել ծախսերը
այդ գործունեության իրականացման համար
(ռեսուրսափնայուն դուրսը սկզբունք): Խնայված միջոցները
ուղղել նոր՝ ավելի արդյունավետ, Էկոլոգիապես մաքուր և
անվտանգ տեխնոլոգիաների մշակմանը, ինչը հիրավի
հանդիսանում է կայուն տնտեսական աճի և Էկոլոգիական
հավասարակշռության գրավականը:

5. Ծրջակա միջավայրի վրա ազդեցություն գնահատման և
վտանգների կանխման մեթոդաբանություն «Էկոլոգիական
անորոշությունը»:

6. Ազգաբնակչության Էկոլոգիական անվտանգության
ապահովում և շրջակա միջավայրի կենսաապահովող որակի
պահպանում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ
մարզի հանքարդյունաբերության ազդեցության
Էկոլոգիական վտանգների բացասական հետևանքների
անմիջական կորոզ են համարվում ինչպես շրջակա միջավայրը,
այնպես էլ բնակչությունը (թունավոր արտանետումներով
հարուստ մթնոլորտ, աղտոտված հողային մակերեսներ և
ոռոգման ու խմելու համար օգտագործվող ջրային
ռեսուրսներ, վտանգավոր թափոններ առելի ծավալներով և
այլն): Անշուշտ շրջակա միջավայրի կենսաապահովող որակի
անկումը հանգեցնում են Էկոլոգիական հիվանդա-
ցությունների թվի ավելացմանը: Հանքարդյունաբերության
ոլորտի Էկոլոգիապես չկարգավորված Էքստենսիվ
գարգացումն առաջացնում է մի շարք առողջապահական
խնդիրներ, որոնց լուծումը, կապված է բժշկական մոնիթո-
րինգի համակարգի գործունեության ու ժեղացման հետ: Այստեղ
կարևորը այն է, որ յուրաքանչյուր երկրի, այդ թվում
Հայաստանի, տնտեսական առաջընթացի ամենագլխավոր
գրավականը պետք է լինի հասարակության առողջությունը և
բարեկեցությունը:

7. Պոչամբարների Էկոլոգիական անվտանգության
ապահովում:

Հետևաբար, կատարվել է եզրակացություն, համաձայն որի
տվյալ հիմնախնդիրները համակարգավածությունը և դրանց
վերաբերյալ հասցեական մոտեցումը՝ միասնական համալիր
ծրագրերի ընդունման և իրականացման համառոտ քստում կարող

են բերել Լոռու մարզի տնտեսական ու բնապահ պանակ ան ու որոնք են Եկոլոգիական անվտանգության ապահովման համակարգի ձևավորմանը:

Աշխատանքում կարևորվել է Եկոլոգիական ռիսկի գնահատումն և ձեռնարկությունների վտանգավորության կատեգորիայի որոշումն համարընդգրկել Եկոլոգիական վտանգների վերլուծության և գնահատման համակարգում: Համակարգը ունի ճկուն կառուցվածք, որը անհրաժեշտության դեպքում կարող է կերպարանափոխվել և դառնալ ավելի արձագանքող մարզի Եկոլոգիական անվտանգության ապահովմանը:

Հետագոտության հիմնական արդյունքներն ամփոփվել են «**Եզրակացություններ**» բաժնում, որոնց բովանդակությունը կայանում է հետևյալում՝

1. Լոռու մարզի տնտեսական զարգացած ուղղվածության և սոցիո-Եկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզի ամբողջական համակարգը դեռևս չի դրսևորում կայուն-նացման հատկանիշներ: Տնտեսության աշխուժացումով պայմանավորված է հիմնականում արդյունաբերական առաջատար ճյուղերի՝ մշակող արդյունաբերություն, էներգետիկայի լեռնահանքային արդյունաբերության համակարգի գործունեության մեծացում: Ավելի, ՓՄՁ-երը անկում են ապրել, որոնք նպաստել են մարզի բնակչության սոցիալական կարգավիճակի վատթարացմանը, աղքատության և արտագաղթի ու ժեղացմանը:
2. Լոռու մարզի տնտեսական զարգացման Եկոլոգիական հետևանքների գնահատումը միանշանակ վկայում են այն մասին, որ շրջակա միջավայրի որակի ցուցանիշների արդեն իսկ մոտ են կրիտիկական մակարդակին, որի գերազանցումը կհանգեցնի ռիսկային գործոնների սպեկտրի ընդլայնմանը և Եկոլոգիականների նոր աղբյուրների առաջացմանը: Դակարող է հանգեցնել հասարակական առողջության և կյանքի որակի վատթարացմանը, ինչի նախանշանները արդեն իսկ ակնհայտ և մտահոգիչ են:
3. Խիստ անհանգստացնող է հանքագործական արդյունաբերության ազդեցությունը մարզի ջրային ռեսուրսների որակի վրա: Դեբեդ, Շնող և Ախթալ ագետումներում կտրուկ բարձրացել են ծանր մետաղների, սուլֆատների և բազմաթիվ վտանգավոր այլ քիմիական միացությունների միջին կոնցենտրացիաները, փոխվել է նաև ոռոգման ջրերի որակը: Անկախ ջրային ռեսուրսների կառավարման իրականացված ծրագրերի արդյունքից, այս ոլորտում դեռևս պահպանվում է Եկոլոգիական լարվածություն: Ծրագրերում ցանկալի գիտական մակարդակով արտացոլված չէ նորամուծական / տեխնոլոգիական վերադիման գործունը, հատկապես ջրերի մաքրման կայանների և խողովակաշարի

վերանորոգման մասով:

4. Էկոլոգիական անվտանգության համակարգի ձևավորման և կանոնավոր գործունեության ապահովման համար առավել հրատապ է օրենսդրական, իրավական և նորմատիվամեթոդական դաշտի ապահովումը: Տվյալ համատեքստում անհրաժեշտ է նախ և առաջ հստակեցնել Էկոլոգատնտեսական համակարգերում ռիսկի և անվտանգության կառավարման, կազմակերպական և տնտեսական մեխանիզմների գրագետ կիրառումը, հսկողության Էկոլոգափորձագիտական տեղեկատվական բազաների ստեղծումը:
5. Ընդերքօգտագործման արդի միտումները վկայում են, որ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման արտադրանքի ծավալի մասով 2014թ. իր ցուցանիշներով Լոռիի գիջում է միայն Սյունիքի, ընթացիկ գներով կազմելով 10320.4 մլն դրամ և 162343.6 մլն դրամ համապատասխանաբար: Սակայն մթնոլորտի աղտոտման ցուցանիշներով այն առաջատարն է 2014թ. դրությամբ՝ 44120 տոննա: Երևոյթ, որն անսովոր է մարզի համար, հատկապես փոշու քանակության գերնորմատիվային արտանետումների մասով: Ենթադրվում է, որ այս տեղ միանգամայն նկատելի են բաց հանքերի շահագործման Էկոլոգիական վտանգները, կապված օգտակար հանածոների էքստենսիվ արդյունահանման հետ:
6. Առավել մեծ է հողերի դեգրադացման վտանգը, կապված ծանր մետաղների իոնների ազդեցության հետ: Հիմնախնդիր, որը չի ստացել արժանի լուծում և ներկայումս կրում է «խրոնիկական» վտանգի բնույթ, ու ժողացնելով բացասական ազդեցության աստիճանը հողային ռեսուրսների/հողատեսքերի վրա: Ռեկուլտիվացման ցածր տեմպերի և ֆինանսական դեֆիցիտի պայմաններում դրական տեղաշարժ: Մեծանում է նաև վտանգի աստիճանը, կապված գյուղատնտեսական նշանակության հողերի բերրիության/բերքատվության անկման կայուն ռիսկերի հետ, այն էլ պահուստային հողերի սակավության պայմաններում: Աճում է բարելավման կարիք ունեցող հողերի քանակն ու տեսակը, հատկապես բաց եղանակով հանքերի շահագործման տարածքներում, իսկ բաց լեռնային հանքերի համար այնպես էլ օրենսդրորեն հստակեցված չեն Էկոլոգիական սահմանափակումները: Հետևաբար արդիական է մարզում իրականացնել հողերի (տարածքի ամբողջությամբ) Էկոլոգատնտեսական գոտիավորումը ըստ ռիսկի և վտանգի ցուցանիշների: Մեր կարծիքով, դա կնպաստի խուսափել անցանկալի Էկոլոգիական կոնֆլիկտներից համայնքներին խոշորացման ներկայիս գաղափարախոսության ներքո:
7. Մարզի բացասական Էկոլոգիական հետևանքներին առաջացման

տեսանկյունից առավել ազդեցիկ են արդյունաբերությունը, հատկապես քիմիական ձեռնարկությունները: Ընդերքօգտագործումը

շարունակում է զարգանալ խիստ բնատար մոդելի շրջանակներում, բավականին մասշտաբային է, իսկ ռիսկերի և Էկոլոգիական վտանգների մասով անկանխատեսելի:

8. Էկոլոգիական ռիսկային գործոնների բազմազանությունը և սիներգիկ ներգործությունը զգալի ազդեցություն են էթոլոգում մարզի բնակչության առողջության վրա, առաջացնելով տարբեր տեսակի անթրոպոգեն Էկոլոգիական հիվանդություններ: Անշուշտ այս ամենում որոշակի ազդեցություն ունեն սոցիալական պայմանները ու հասարակական բարեկեցությունը, աղքատությունը, գործազրկությունը և այլ գործոններ: Այս ամենը հաստատում է, որ մարզի բնակչության առողջության որակը յուրովի ինդիկատոր է շրջակա միջավայրի որակի և կյանքի որակի, նաև այդ որակների աճանցյալը: Հետևաբար, մարզում տնտեսական գործունեության և գործունեության այլ տեսակի նախագծերի պետք է համարել թույլատրելի և Էկոլոգիապես ընդունելի, եթե գնահատվում են մարդու առողջության վրա ազդող ռիսկերը և վտանգները:

Անտեսակցության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Հարությունյան Յ.Յ., «ՀՀ Լոռու մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները»: «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»: Գիտական հոդվածագրություն, 2015, էջ 288-293:
2. Հարությունյան Յ.Յ., «Լոռու մարզի տնտեսական զարգացման և շրջակա միջավայրի Էկոլոգիական որակի փոփոխություն արդի միտումները»: «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»: Գիտական հոդվածագրություն, 2015, էջ 294-299:
3. Հարությունյան Յ.Յ., «Տնտեսական գործունեության Էկոլոգիական հետևանքների գնահատման մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում»: «Ֆինանսներ և Էկոնոմիկա» #5-6(189-190) ՀՏԴ 502: 338(479.25) 2016, էջ 114-116:
4. Հարությունյան Յ.Յ., «Էկոլոգիական անվտանգության ապահովման հիմնախնդիրները ՀՀ Լոռու մարզում»: «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»: Գիտական հոդվածագրություն, 2016, էջ 260-264:
5. Հարությունյան Յ.Յ., «Ընդերքօգտագործման արդի միտումները ՀՀ-ում»: «Այլ ընտրանք» 2016 #4, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 55-60:

АРУТЮНЯН АРУТЮН АМАЗАСПОВИЧ
ПРОБЛЕМЫ ЭКОЛОГИЧЕСКОГО РЕГУЛИРОВАНИЯ
ХОЗЯЙСТВЕННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В МАРЗЕ ЛОРИ.

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02- “Экономика, управление хозяйством и его сферами”

Защита диссертации состоится 23 февраля 2017 г. в 14⁰⁰ часов, на заседании Специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Объект и предмет исследования. Объектом исследования является единая система развития секторальной деятельности экономической системы и обеспечения экологической безопасности марза Лори РА, а предметом исследования – выявление, систематизация проблем формирования опасных тенденций в сфере природоохраны и природопользования в Лорийской области РА и разработка областной системы организации и обеспечения экологической безопасности.

Цель и задачи исследования. Основной целью исследования является изучение секторальной деятельности экономической системы марза Лори Республики Армения в контексте стратегических проблем обеспечения экологической безопасности окружающей среды и населения. Для достижения указанной цели в работе были поставлены и решены следующие задачи:

- исследовать эколого-экономические особенности марза Лори в контексте анализа современного состояния и тенденций развития ее экономики;
- дать анализ научной направленности экологической оценки экономической деятельности и обеспечения экологической безопасности;
- представить проблемы воздействия недропользования на экологическое качество окружающей природной среды и экологической безопасности в Лорийской области;
- рассмотреть проблемы воздействия опасностей на биоразнообразие и леса области и обеспечения экологической безопасности отходаобразования и хвостохранилищ;
- оценить перспективы экономического развития марза Лори на основе систематизации природоохранных программных действий и проблем обеспечения экологической безопасности;

- редложить организационные и экономические механизмы управления рисками и опасностями в эколого-экономической системе, а также разработать областную систему обеспечения экологической безопасности.

Научная новизна диссертационной работы – состоит в выявлении опасных экологических тенденций, обусловленных экономической деятельностью в марзе Лори и посредством их систематизации определение стратегических проблем и направлений обеспечения экологической безопасности, в рамках которых:

1. разработан новый методический подход к обеспечению безопасности и иерархической классификации в экологической сфере РА, позволяющий в единой системе обеспечения безопасности выделить национальную и областную безопасность, а также локальную безопасность объекта и индивидуальную безопасность личности;
2. по результатам комплексного ситуационного анализа выявлены и оценены стратегические проблемы экологического регулирования и обеспечения экологической безопасности экономической деятельности в марзе Лори и на их основе предложены приоритетные мероприятия по обеспечению национальной и региональной безопасности;
3. на основе систематизации экономических и организационных механизмов управления риском и безопасностью в эколого-экономических системах разработана новая система обеспечения экологической безопасности в марзе Лори, внутренняя структура и функции которой ориентированы на предотвращение как национальных, так и региональных экоопасностей и рисков.

HARUTYUNYAN HARUTYUN HAMAZASP

THE ISSUE OF ENVIRONMENTAL REGULATION OF THE ECONOMIC ACTIVITIES IN THE LORI REGION

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02- " Economics, Management of Economy and its Spheres ".

The defense of the thesis will take place on February 23, 2017 at 14⁰⁰ o'clock at 014 Council of Economics of the SCC RA at Armenian State University of Economics, 128 Nalbandyan Street, Yerevan 0025.

RESUME

The object and subject of the study: The object of the study is the single (unified) system of ensuring the economic development and environmental safety of the sectoral activities of the economic system of Lori region of the Republic of Armenia. The subject of the study is the identification and systematization of the issue of emergence of hazardous trends in the environmental protection and exploitation of the natural resources of the Lori region of the Republic of Armenia as well as to provide an organizational chart of the regional system for organizing and ensuring the environmental protection.

The purpose and the objectives of the research: The main purpose of the dissertation thesis is to justify the environmental and economic peculiarities of the sectoral economic activities of the economic system of the Lori region of the Republic of Armenia in the context of the strategic issues of ensuring the environmental safety of the population and environment. For that purpose, the following objectives were set:

- To study the environmental and economic peculiarities of the Lori region (marz) in the context of the current state of affairs of the regional economy and its development path;
- To analyze the scientific approaches to the environmental assessment of the economic activity and ensuring the environmental security;
- To provide the issues of the environmental safety and the impact of exploiting the natural resources on the quality of environment (nature) of the Lori region;
- To discuss the impact threats to (hazards for) the forests and the biodiversity of the region, as well as the issues of ensuring the environmental safety with respect to the tailings and wastes;
- To assess the perspectives of the economic development of Lori region by systemizing the environmental program actions and the issues of ensuring the

environmental safety;

- To propose economic, risks and threats (hazards) mechanisms of risk management in the environmental and economic systems, and to design a regional system for ensuring the environmental safety.

The scientific novelty of the dissertation thesis: The main scientific novelty of the dissertation is the identification of the strategic issue of environmental safety with respect to hazardous environmental trends stemming from the economic activities in the Lori region of the Republic of Armenia and through their systemizing. In the frameworks of the dissertation thesis the followings have been carried out:

1. An approach of hierarchic classification of the safety (security) in the environmental system of the Republic of Armenia has been developed according to which, in the unified system of safety (security), regional security, national security and the local (marz) security were distinguished from one another, and personal safety of a human being has been distinguished from local object as well.
2. As a result of the comprehensive situational analysis (case study), the main strategic issues of ensuring the environmental safety and the issues of environmental regulation of the economic activities has been identified and analyzed; and based on that, national and regional measures of ensuring the environmental safety have been proposed.
3. The environmental safety system of Lori region has been developed based on the systematization of the economic and organizational mechanisms for the risk and safety management in the environmental and economic systems, according to which the internal structure and functions focus on the prevention of both local and regional (in the broader sense) environmental hazards (threats).